ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

01.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/41

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.08.2017թ. թիվ 03/26-3/15137-17 գրությամբ «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 14.08.2017թ. թիվ 01/61-16239 գրության հիման վրա, 18.08.2017թ. թիվ 03/26-3/15137-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 18.08.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/15192-17 գրությամբ դիմել է «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ին և վերջինիս տեղեկացրել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 14.08.2017թ. թիվ 01/61-16239 գրության հիման վրա, 18.08.2017թ. թիվ 03/26-3/15137-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ և խնդրել է ներկայացնել գրավոր կարծիք, սակայն «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն Խորհրդին չի ներկայացրել իր դիրքորոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 25.08.2017թ. ժամը 11:15-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել իր մասնակցությունը, ով հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ի միջև 09.03.2017թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/30-10» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագիր, համաձայն որի «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն պարտավորվել է կատարել Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքներ, սակայն՝ չունենալով համապատասխան միջոցներ և հնարավորություն աշխատանքները շարունակելու համար, «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ին հրաժարվել է Պայմանագիրը կատարելուց :

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 14.08.2017թ. թիվ 01/61-13273 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ի միջև 09.03.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/30-10» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրի 1.1. կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված

ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի տեխ. բնութագրին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան»:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ «Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, իսկ աշխատանքների 25%-ի կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 45-րդ օրացուցային օրը, ևս 25%-ի կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 75-րդ օրացուցային օրը և ևս 25%-ի կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 105-րդ օրացուցային օրը, իսկ մնացած 25%-ի կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում՝ մինչև 2017թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Ընկերության կողմից կատարվել են 2 948 137 ՀՀ դրամի չափով բազմաբնակարան շենքերի թվով ութ շքամուտքերի վերանորոգման աշխատանքներ, որոնք ընդունվել են Պավիրատուի կողմից:

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարին 03.08.2017թ. հասցեագրված համապատասխան գրությամբ, Ընկերությունը փաստացի հրաժարվել է պայմանագրային պարտավորությունները կատարելուց՝ պատճառաբանելով, որ չունի համապատասխան միջոցներ և հնարավորություն աշխատանքները շարունակելու:

Նշվածի համաձայն՝ «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն փաստացի խախտել է Պայմանագրի 1.3 կետի պահանջները, ուստի Ընկերությունը պարտավոր է վճարել Պայմանագրի 6.3կետով սահմանված տուգանքը՝ Պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի չկատարված աշխատանքների 0,5 տոկոսի չափով:

<< քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

<< քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

<< քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.....»:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանգիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը:

<< քաղաքացիական օրենսգրքի 469-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պայմանագրի փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները:

<< քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի

համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ գրությունը, օրենսդրական պահանջի համաձայն հրապարակվել է www.gnumner.am ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 25.08.2017թ. ժամը 11:15-ի նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է 14.08.2017թ. թիվ 01/61-13273 գրությամբ ներկայացրած դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2017/41 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/41 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.Երևանի քաղաքապետարանի և «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ի միջև 09.03.2017թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/30-10» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն (տվյալ դեպքում՝ «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն) պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևերով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարած աշխատանքը և վարձատրել դրա համար:

3. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի տեխ. բնութագրին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան»:

4. Պայմանագրի 1-ին կետի 1.3 ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, իսկ աշխատանքների 25%-ի կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 45-րդ օրացուցային օրը, ևս 25%-ի կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 75-րդ օրացուցային օրը և ևս 25%-ի կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 105-րդ օրացուցային օրը, իսկ մնացած 25%-ի կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում՝ մինչև 2017թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

5. Պայմանագրի 3-րդ կետի 3.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

6. Պայմանագրի 3-րդ կետի 3.1.4 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը):

7. Ի պատասխան Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի 01.08.2017թ. թիվ 31/03-ել 951 գրության՝ «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն 03.08.2017թ. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն 09.03.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/30-10» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրի շրջանակներում (Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքներ) չունի համապատասխան միջոցներ և հնարավորություն աշխատանքները շարունակելու համար:

8. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը Երևանի քաղաքապետարանին ուղղված 07.08.2017թ. N 31/02-ել 965 գրությամբ հայտնել է, որ «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն 09.03.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/30-10» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրի շրջանակներում խախտել է Պայմանագրի 1.3 կետով սահմանված պահանջները, որի մասին բացի բանավոր զգուշացումներից Ընկերությանը տեղեկացվել է գրավոր՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի կողմից Ընկերությանը հասցեագրված՝ 03.07.2017թ. N 31/03-1/843 գրությամբ, սակայն մինչ 01.08.2017թ. Կապալառուն ոչ մի պատասխան չի ներկայացրել և փաստացի դադարեցրել է աշխատանքները:

Վերը նշվածի մասին Կապալառուին 2-րդ անգամ գրավոր տեղեկացվել է 01.08.2017թ., որին ի պատասխան՝ Ընկերությունը 03.08.2017թ. գրությամբ պատասխանել է, որ «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն 09.03.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/30-10» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրի շրջանակներում չունի համապատասխան միջոցներ և հնարավորություն աշխատանքները շարունակելու համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը խնդրել է Երևանի քաղաքապետարանին միակողմանի լուծել «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/30-10» ծածկագրով

կապալային աշխատանքների գնման պայմանագիրը, ինչպես նաև հայտնել է, որ «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն Պայմանագրի շրջանակներում փաստացի իրականացրել է թվով ութ մուտքի վերանորոգման աշխատանքներ՝ 2 948 137 ՀՀ դրամ գումարի չափով, իսկ Պայմանագրի 6.3 կետով հաշվարկված տուգանքը կազմում է 34 210 ՀՀ դրամ:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.08.2017թ. թիվ 03/26-3/15137-17 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 14.08.2017թ. թիվ 01/61-16239 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***«Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ*** (կետանցով, ապրանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) ***կատարելը»:***

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված*** կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու***

պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Երևանի քաղաքապետարանի և «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ի միջև 09.03.2017թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/30-10» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն (տվյալ դեպքում՝ «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն) պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևերով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարած աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1-ին կետի 1.3 ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, իսկ աշխատանքների 25%-ի կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 45-րդ օրացուցային օրը, ևս 25%-ի կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 75-րդ օրացուցային օրը և ևս 25%-ի կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 105-րդ օրացուցային օրը, իսկ մնացած 25%-ի կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում՝ մինչև 2017թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

«Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն 03.08.2017թ. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն 09.03.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/30-10» ծածկագրով կապալային աշխատանքների գնման

պայմանագրի շրջանակներում չունի համապատասխան միջոցներ և հնարավորություն աշխատանքները շարունակելու համար:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը Երևանի քաղաքապետարանին ուղղված 07.08.2017թ. N 31/02-Ել965 գրությամբ հայտնել է, որ «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն 09.03.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/30-10» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրի շրջանակներում խախտել է Պայմանագրի 1.3 կետով սահմանված պահանջները, որի մասին բանավոր զգուշացումներից բացի Ընկերությանը տեղեկացվել է նաև գրավոր՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի կողմից Ընկերությանը հասցեագրված՝ 03.07.2017թ. N 31/03-1/843 գրությամբ, սակայն մինչ 01.08.2017թ. Ընկերությունը ոչ մի պատասխան չի ներկայացրել և փաստացի դադարեցրել է աշխատանքները:

Վերը նշվածի մասին Ընկերությունը երկրորդ անգամ գրավոր տեղեկացվել է 01.08.2017թ., որին ի պատասխան՝ Ընկերությունը 03.08.2017թ. գրությամբ հայտնել է, որ «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն 09.03.2017թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/30-10» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրի շրջանակներում չունի համապատասխան միջոցներ և հնարավորություն աշխատանքները շարունակելու համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը խնդրել է Երևանի քաղաքապետարանին միակողմանի լուծել «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/30-10» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագիրը:

Պայմանագրի 3-րդ կետի 3.1.4 ենթակետը՝ սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: ***Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝***

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը):

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն թույլ է տվել Երևանի քաղաքապետարանի և «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ի միջև կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/30-10» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից ***11.08.2017թ. Պայմանագրի միակողմանի լուծմանը***, քանի որ «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն 03.08.2017թ. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարին ուղղված գրությամբ հրաժարվել է շարունակելու Պայմանագրով նախատեսված աշխատանքները՝ համապատասխան միջոցներ և հնարավորություն չունենալու պատճառով:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ առկա է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 04.08.2017թ. թիվ ՍՑ-ԱՄ-2017/31 որոշումը, որով արձանագրվել է, որ «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն թույլ է տվել Երևանի քաղաքապետարանի և «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ի միջև կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/30-7» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից ***07.07.2017թ. Պայմանագրի միակողմանի լուծմանը***, քանի որ «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն 28.06.2017թ. Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարին ուղղված գրությամբ հրաժարվել է շարունակելու աշխատանքները և վերացնելու առկա թերությունները:

Այսպես, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը***:

Ամփոփելով վերոգրյալը, Խորհուրդն արձանագրում է, որ ***«Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ն մեկ տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:***

Միևնույն ժամանակ, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «ա» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***վերջինիս վերագրվող խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում Ընկերությունը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը***, քանի որ սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ չկա որևէ տեղեկատվություն «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 07.07.2017թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ:

«Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում:

Հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 18.08.2017թ. թիվ 03/26-3/15137-17 գրությամբ ներկայացված «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 18.08.2017թ. թիվ 03/26-3/15137-17 գրությամբ «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06942338) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ